ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«3» հունիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-59/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի 19.05.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 19.05.2016թ. ներկայացրած բողոքով «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) որպես բողոքի առարկա նշել է՝ «Աբովյանի Վիկտոր Համբարձումյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՎՀԱ10Դ-ԲԲԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգի

(այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 11.05.2016թ. թիվ 4 արձանագրությամբ կայացրած որոշումը:

Ընկերությունը բողոքով պահանջել է՝

- դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2016թ. թիվ 4 արձանագրությամբ կայացրած որոշումը՝ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը մերժելու և «Շինարար-10» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին:
- կիրառել ժամանակավոր միջոց, այն է՝ կասեցնել «ՎՀԱ10Դ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգը, քանի որ, եթե պայմանագիր կնքվի այլ կազմակերպության հետ, ապա բողոքը կդառնա առարկայազուրկ և կվնասի «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի շահերը:

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին որպես գնային առաջարկի հիմնավորում ներկայացվել են տվյալ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ մատակարար կազմակերպությունների կողմից ներկայացված պայմանագրերը և գնային առաջարկները:

Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուի կողմից հայտարարված Ընթացակարգի ամփոփ նախահաշվի մեջ ներառված գլուխ N 8՝ ժամանակավոր շենքեր և կառույցներ 1,2% (252,400 ՀՀ դրամ) և գլուխ N 9՝ ձմեռային թանկացումներ 0,96 % (204,340 ՀՀ դրամ), որոնք տվյալ ժամանակահատվածում շինարարական աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ ծախսեր չեն, քանի որ Ընթացակարգով հայտարարված շինմոնտաժային աշխատանքների ժամանակահատվածը վերաբերվում է ամառային ամիսներին, իսկ ժամանակավոր շենքերի և կառույցների փոխարեն Ընկերությունը ունի համապատասխան վագոն-տնակ, որի օգտագործումը լրացուցիչ ծախսերի անհրաժեշտություն չի առաջացնում:

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն նշել է նաև, որ ամփոփ նախահաշվի ընդհանուր գումարից վերը նշված երկու գումարների նվազեցումը հանգեցրել է գնային առաջարկի լրացուցիչ հիմնավորման:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2016թ. թիվ 4

արձանագրության մեջ հստակ չի նշվել «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը մերժելու հիմքերը, որը տվել է տարակարծիք մեկնաբանության խնդիր՝ մերժման հիմքի հետ կապված և «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն գտնում է, որ վերջինիս կողմից բավականին պատշաճ և հիմնավոր ներկայացվել է առավելագույն գնի 75 տոկոսից ցածր գին ներկայացնելու հիմքերը:

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը, մասնակցելով 25.05.2016թ. տեղի ունեցած ԳԲԽ-59/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է իր բողոքով ներկայացրած դիրքորոշումը:

2. <u>«Աբովյանի Վիկտոր Համբարձումյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Կենտրոնը 23.05.2016թ. թիվ 02/04.1/1993-16 գրությամբ «Աբովյանի Վիկտոր Համբարձումյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին խնդրել է եռօրյա ժամկետում ներկայացնել «ՎՀԱ10Դ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Պատվիրատուն Կենտրոնին է ներկայացրել Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

«Աբովյանի Վիկտոր Համբարձումյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը, մասնակցելով 25.05.2016թ. տեղի ունեցած ԳԲԽ-59/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, ներկայացրել է իր առարկությունները «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի բողոքի վերաբերյալ:

3. <u>ԳԲԽ-59/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-59/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Աբովյանի Վիկտոր Համբարձումյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է

«ՎՀԱ10Դ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգ, որին, ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 11.05.2016թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը, ցածր գնային առաջարկի հիմնավորման փոփոխությունները համարվում են չհիմնավորված:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 11.05.2016թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության.

• 1-ին կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է, որ եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75%-ից:

• 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած «Շինարար» ՍՊԸ-ին, առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ Հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

4. <u>ԳԲԽ-59/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի 19.05.2016թ. ներկայացրած բողոքը, «Աբովյանի Վիկտոր Համբարձումյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

ներկայացրած «ՎՀԱ10Դ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ ***հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովը գնահատում է նույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և, հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը պատասխանատվություն է կրում **իր որոշումների**, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու **հիմնավորվածության համար**:

Կարգի 49-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, **ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի**

համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.05.2016թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ *«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը, ցածր գնային առաջարկի հիմնավորման փոփոխությունները համարվում են չհիմնավորված,* սակայն հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն չի նկարագրվել, չի հիմնավորվել, թե հանձնաժողովը «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի փաստաթղթերը, առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը, ցածր գնային առաջարկի հիմնավորման փոփոխությունները հանձնաժողովի կողմից ինչու է համարել չհիմնավորված, ինչը հակասում է իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջներին:

Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է, որ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան ***հայտի մերժման դեպքում*** պետք է պարունակեր ***հայտի մերժման հիմնավորումը***, Կարգի 49-րդ կետը սահմանում է, որ ***տեխնիկական բնութագրերում անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները,*** միևնույն ժամանակ Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետը սահմանում է, որ **հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների հիմնավորվածության համար**, ուստի գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 8-րդ հոդվածի հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և Կարգի 49-րդ կետով սահմանված պահանջները:

Արդյունքում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, խախտելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, առանց հայտի մերժման հիմնավորման որոշել է մերժել առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդ տեղը զբաղեցրած մասնակից՝ «Շինարար-10» ՍՊԸ-ին:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի 19.05.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել «Աբովյանի Վիկտոր Համբարձումյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՎՀԱ10Դ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2016թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը մերժելու և «Շինարար-10» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվայան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-59/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան